

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ


Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Կառ. քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ն

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՁՈՐԵՒՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ

չեն տրուիր

ԵՐԿՈՒ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Կիրակի օր, ժամը մէկուկէսին, Սանդղաղի մէջ երրորդ ու վերջին անգամ ըլլալով բանախօսեցին Հնչակեան երկու գործիչները, Տ. Տ. Խուշպուլեան ու Չիթճեան. Սրահը այս անգամ ամբողջապէս լեցուած էր. օթեակներու մէջ հետաքրքիրները կը նշմարէին նաեւ բաւական թուով կիներ. նախ իօսեցաւ Տ. Խուշպուլեան. ինչպէս արդէն նախորդ անգամներ, այս անգամ ալ Տ. Խուշպուլեան իր արագ ու բնական, որքան զգայուն ու տպաւորիչ խօսուածքովը ունկնդիրներու կողմէ մէկէ աւելի անգամներ ծափահարութեանց արժանացաւ. իրեն նիւթ ընտրած էր Հայաստանի մէջ հայ տարրին դիրքը, արդի վիճակն ու նախասահմանեալ դերը. բանախօսը նախ նկարագրեց թէ թուրքիոյ մէջ մեր արդի դրութիւնը ի՞նչ է. ցոյց տուաւ հայերը, յառաջդիմութեանց ընդունակ ցեղէ մը (Արիական) ծագած ազգ մը, որ չըլլապատուած է Սօնկոյ ծագումի պատկանող հրոսախումբերով. վերլուծեց այդ վայրենի ցեղերու զգացումները ու վերջապէս եզրակացուց թէ, թէն նիւթական բիրտ ուժի տեսակէտով հայերը, իրենց դարաւոր ստրկութեանը հետեւանքով, անոնց մէջ շատ վար կը մնան, սակայն իրենք ունին այդ կիսավայրենի ցեղերու վրայ քաղաքական ու մշտաւորական գերազանց ու անվիճելի առաւելութիւններ. հայերը մոծ ընդունակութիւններ ունին յառաջդիմելու, թէ՛ երկրագործական, թէ՛ առեւտրական ասպարէզներու մէջ.

Բայց որպէս զի կարելի ըլլայ յառաջդիմել, նոյնիսկ առեւտրական թէ՛ երկրագործական ասպարէզներուն մէջ, անհրաժեշտօրէն, տիրականօրէն հարկաւոր է որ մարդ կատարելապէս վստահ ըլլայ կեանքի ու ինչքի ապահովութեան, սեփականութեան նուիրականութեան վրայ. արդ, ի՞նչ կը ներկայացնէ այսօր թուրքիան, այսօր թուրքիոյ մէջ գոյութիւն չունի

ոչ ինչքի, ոչ ալ կեանքի ապահովութիւն. մէկ ծայրէն միւսը երկիրը կը վիտայ, կիսավայրենի, կիսաքարաքոս ու վրանաբնակ հրոսակներով, որոնք իրենց ապրուստը հոգալու համար չունին ունէ գրադում, ունէ արհեստ. որոնց միակ գրադումն ու արհեստն է կողոպտել ու թալլել իրենց առջեւ ելնող ունէ անհատ, ու այսպէս ապրել, ատեն մը հոս, ատեն մը հոն. ու տեղային կառավարութիւնը, որ պարտականութիւն ունէր յարգել ու գործադրել տալու արդարութեան օրէնքները, հաւասարութեան սկզբունքները, ոչ միայն յանցաւորները, թալլողները, մարդասպանները չի պատժեր, այլ ընդհակառակը ինքն ալ իր կողմէ, պաշտօնապէս ձեռք կուտայ անոնց, զանոնք կը պաշտպանէ իրենց բոլոր շահատակութեանցը մէջ. ի՞նչու. զանգի, կառավարութիւնը ինքն ալ, աւելի կամ նուազ օրինաւոր երեւոյթներու ներքեւ, պարզապէս աւազակներու կազմակերպութիւն մըն է, որ դէմ է ունէ յառաջդիմական շարժումի:

Ուրեմն թուրքիոյ մէջ չկայ հայ անունը կրողներու համար ինչքի ու կեանքի ապահովութիւն, ըլլայ կրօնաւոր կամ վաճառական կամ երկրագործ. ուրեմն այս երեք դասակարգերու պատկանող անհատներն ալ, որպէս զի իրենց ասպարէզներուն մէջ յառաջդիմելու ապահովութիւնը վայելեն, հարկաւորապէս պէտք է իրենք ալ իրենց բոլոր կարողութեամբը աշակցին յեղափոխական գործին, որուն նպատակն է թուրքիոյ մէջ իրերու արդի դրութիւնը փոխել ու ձեռք բերել կեանքի ապահովութիւն, սեփականութեան նուիրականութիւն, ու արդարութեան գործադրութիւն. մինչ իրերու արդի դրութեամբ, եթէ հակայեղափոխական իսկ ըլլան, վերստին վաճառականն ու երկրագործը կեանքի ու ինչքի ապահովութիւն պիտի չկրնային ձեռք բերել:

Տ. Խուշպուլեան այս խօսքերով իր բանախօսութիւնը վերջացնելէ յետոյ, Տ. Գուրպէթեան յայտա-

րարեց թէ 10 վայրկեան դադարէ մը վերջ Տ. Չիթճեան պիտի առնէ նախօտ: Դադարը խաղաղ անցաւ. բայց սրահին մթնոլորտը սիկարի մուխով լեցուած էր, երբ Տ. Չիթճեան իր ատենաբանութիւնը սկսեց. Բողոքական երէցութենէ ազգային յեղափոխութեան նուիրուող բանախօսը այս անգամ յայտարարեց թէ՛ իրականութեանց վրայ պիտի խօսի: Կենդանի օրինակներով նախ բացատրեց թէ բռնութիւնները հայ ժողովուրդին մէջ արդէն յեղափոխութեան ոգին արթնցուցած էին. այս զարթունմէն յետոյ մէջտեղ եկող յեղափոխական կազմակերպութիւնը չը կրցաւ դասաւորել ու կառավարել ժողովուրդին եռանդը, այլ աւելի վառեց ու հրահրեց և այդպէսով սկսաւ անսանձ, անկարգապահ և անհեռատես դործունէութեանց ու շարժումներու արհեստական շարք մը: Գործունէցան սխալներ, և անգին ու անկազմակերպ ժողովուրդը յանկարծ դէմ առ դէմ գտնուեցաւ կազմակերպութեան առջեւ, որ իրեն ծրագիրը ալեւս գծած էր. հայ տարրը քննադատեց ընդ:

Տ. Չիթճեան դատապարտեց մասնակիցացոյցը. ըսաւ. «Իբրեւ Հնչակեան մը կը մընտնջ, ինչպէս ուրիշ կուսակցութեանց, նոյնպէս մեր սխալները, Ժամանակ մը կը կարծէին թէ՛ եթէ մէկ երկու ցոյց կատարուի, Եւրոպայի ուշադրութիւնը մեր վրայ կը դառնայ ու կը փրկուինք: Այս կարծիքին սխալ լինելը մինչեւ 1896 դառն փորձերով հաստատուեցաւ: Հետեւապէս ալ պէտք էր սխալները ճշնշտաւ ու դէպի լաւը յեղաշրջուիլ, և Հնչակեան կուսակցութեան յեղաշրջումը սկսաւ այդ թուականէն. կուսակցութիւն մը՝ որ իր մէջ չը յեղաշրջուիր, չի սրբագործիր, մութութիւնները ու սխալները կը յուսկեցնէ և աղետաբեր կըլլայ ժողովրդեան»: (Բոլորն ծափահարութիւն):

Տ. Չիթճեան իր խօսքը Չիթճեանի վերջին ասպատամբութեան դարձնելով, ըսաւ թէ Չիթճեան ցեղ նահապետական զէնքեր մի-

այն ունէին. պատերազմական անհրաժեշտ պիտոյքը անոնց մատակարարուած չէր. նազարէկեան կեդրոնը Չիթճեան հրացաններ զրկած չըլլալէ զատ, երբ մենք Ամերիկայէն զէնք զրկելու առաջարկութիւն կրնէինք, մեզ կը պատասխանէր. «զէնքի մասին դուք մի խորհիք միայն ինձ դրամ զըրկեցէք»: Այս յայտնութեան վրայ ժողովուրդին մէջէն արդի Արզու-մանեանց-Սազունի կեներալներ կայացուցին, նախկին գրաշար Ռուբէն Կարապետեան մը, «սուտէ» պողոտայի Ատենաբանը ըսաւ. «նա մականը ունի՞մ քոյս»: (Դափեր):

Ատենախօսը աւելցուց. «կուսակցութիւնները ինձ համար նշանակութիւն չունին, նոյնիսկ իմ պատկանած Հնչակեան կուսակցութիւնս. եթէ անոնք ազգին փրկութիւնը միմիայն նպատակակէտ չունին, թող ջնջուին: (Բոլորն ծափեր և «կեցցէցէներ»)

Վերջապէս Տ. Չիթճեանի ատենախօսութիւնը շատ լաւ տպաւորութիւն գործեց ժողովուրդին մէջ, ու չէզոքներու կողմէ տրամադրութիւն տեսնուեցաւ համակիրներու խումբեր տալու Հնչակեան կուսակցութեան: Տ. Տ. Չիթճեանի ու Խուշպուլեանի յայտնի ու թագուն հակառակորդները տեսան ու համոզուեցան թէ Հնչակ. կուսակցութիւնը ոչ թէ կանգուն կը մնայ, այլ իր յեղաշրջումներով ընդունակ է նոր ուժեր ստանալու, ցորչափ շարունակեն իր գործիչները միութեան զաղափարի ուղիէն ընթանալ:

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Հ'Առաւելի մէջ կը կարգանք հետեւեալը:

Պուրկազ. «Բնաւ կարեւորութիւն միտաք Շարժումի պարսաւանքներուն: Այդ թերթը, որ վառնայ կը հրատարակուի, փոքր թիւ մը իրեն կուսակից ունի Պուրկարիոյ հայերէն, որոնք զանի խաչագողներու խումբի մը օգնութեամբ կը համարին: Այս երկրի հայոց մեծամասնութիւնը կը գնահատէ Հ'Առաւելի հետեւած քաղաքականութիւնը»:

Չայն Հայրենեաց շաբաթա-
թերթի 174 թիւին մէջ «Մեր-
կացումներ» խորագրով հետեւեալը
կը կարդանք .

1897 Օգոստոսի մէջ Պուլկարիոյ
բազմաթիւ քաղաքներէ պատգամաւո-
րական ժողով մը կը գումարուի Վառ-
նայ քաղաքին մէջ : Այս ժողովին
նպատակն էր Պալքանեան կոմիտէնե-
րու հաշիւները քննել եւ կեդր. Կո-
միտէ մը ընտրել : Պատգամաւորները
կը ներկայացնեն իրենց տեղեկագիր-
ները եւ հաշիւները քննելու, որոնցմէ
կը տեսնուի թէ մէկ տարուան միջո-
ցին 20,000 ֆր. մօտ գումար մը
հաւաքուեր է : Յետոյ կը ներկայ-
գոյն թուինք .

1. Օննիկ Գալազատէ, Վառնայէն .
2. Ստեփան Գաւառեան, Եմապօյէն .
3. Յակոբ Էրկանեան, Ֆիլիպքէն .
4. Գամէր-Արշաւիր, Վառնայէն եւ
Արվախի Իսաք : Յետոյ Պատգամաւոր-
ժողովը կը պնդէ որ Արվախին ման-
րամասնօրէն բացատրէ թէ ինչ նպա-
տակներու գործածուած է վերոյիշեալ
գումարը . սա կը մերժէ : Իմ հաշիւ-
ներս Պուլկարիոյ միայն կրնամ տալ կը-
սէ : Մինչեւ հիմա կեդրոնացում կա-
ռավարուեցանք . այսուհետեւ միայն ա-
պակեղծութեամբ պիտի մտնէ կեդր-
Կ. ի նստութեամբ : Տեսարակ մը կը
ցուցնէ, որուն մէջ ամեն ինչ արձա-
նագրուած է եղեր, բայց սկզբունքի
համար չկրնար զայն ժողովին ներկա-
յացնել : Պատգ. ժողովը կորոշէ որ
Կ. Կոմիտէն այդ հաշիւները քննէ յե-
տոյ . բայց Արվախի անոր ալ չներկա-
յացնելու : Եւ 20,000 ֆր. ալ Արվախի
եւ ընկերաց կոկորդին մէջ կը թաղ-
ուի :

Վառնայի Պատգ. ժողովին մէջ
Արվախի Իսաք կը պօսայ թէ ինքն
սկզբունքի համար հաշիւ չտար, սա-
կայն այսուհետեւ առանց Պալքանեան
Կ. Կոմիտէի հաւանութեան, հինգ սան-
դիւ ալ չկրնար ծախսուիլ : Այսուհե-
տեւ այս ընտրուած մարմինը տէրն է
ամբողջ Պալքանեան երկրներու Դաշ-
կազմակերպութեանց : Իրողութիւննե-
րը հակառակը կը հաստատեն : 1899
Ապրիլի մէջ Պալքանեան Կ. Կ. չորս

անդամները (բացի Ս. Գ. էն) կը գու-
մարուին Վ. ի մէջ մէկ տարուան հա-
շիւները քննելու համար : Կը տեսնուի
թէ Ռուսիոյ քաղաքէ զրկուած 350
լէֆի չափ գումար մը Արվախի կուր
է : Փ. Պուլի Շաքէ ընկերութեան 125
սոմակները Ա. իւրացուցեր է : Վեր-
ջապէս առաւել 2000 ֆր. ասոր
կոկորդը անցեր է : Կ. Կ. ի անդամները
առաջին անգամ ըլլալով կը կասկա-
ծին Ա. ի վրայ : Առանց ժամանակ ու-
նենալու ուրիշ զեղծութիւններ քննելու,
որոնցմէ ոմանք յայտնուեցան «Իրա-
ւունք»ի միջոցաւ, բացատրութիւն
կը պահանջեն Արվախիէն : Ասիկա կը
բարկանայ, ինչ համարձակութիւն .
թրքահայ մը որ, Արվախի «առաջին
ազտին չափ արժէք չունի» հաշիւ պա-
հանջել Ռուսահայէ մը ? , վստահու-
թիւն չունիմ ձեր վրայ : Իսկ Տօքթ.
Ալթապեքեանց եւ Պապա Դասպար
Չերմապէս կը պաշտպանեն Արվախին :
Խնդիրը կը մեծնայ : Կ. Կ. ի անդամ-
ները կը խորհրդակցին տեղական Կ. ի
հետ եւ կորոշեն բողոքել ժընէվի Պիւ-
սոյին : Արվախի իր լրտեսներուն մի-
ջոցաւ կրմանայ ամեն ինչ, կը յար-
ձակի Յ. Է. ի վրայ, կահաբեկէ Օ. Գ. ի :
Օ. Գ. կը մերժէ բողոքը ստորագրելու
Պալքանեան Կ. Կ. կը կորսնցնէ իր
մեծամասնութիւնը եւ մնացած երկու
անդամները Յ. Է. եւ Գ. Ս. անհատա-
կան բողոքներ կողդեն : Ժընէվի Պիւ-
սոն կը պատասխանէ թէ Արվախին
անիրաւ է, պարտաւոր է հաշիւ տալ :
Արվախի մտիկ չընէր : Պիւսոն քաջու-
թիւն չունենար իր որոշումը գործադ-
րելու, գաղտնի պատճառներով : Պալ-
քանեան Կ. Կ. կը լուծուի : Յետոյ
Ռուսոյ (Ա. Զօրեանց) կը զրկուի Պուլ-
կարի իւր իրաւունքը ներկայացուցիչ եւ
քննիչ : Սա ջերմապէս կը պաշտպանէ
Արվախին, կը նախատէ եւ կը հալա-
ծէ Կ. Կ. ի անդամները եւ իրեն հլու
անձինքներէ առժամանակեայ ? Կ. Կ.
անունով մարմին մը կը կազմէ : Իսկ
զրամներն ալ կը մնան Արվախի կո-
կորդին մէջ :

ՔԻՉ ՄԵ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Գ.

Ըսինք թէ, ստելու, զրպարտելու,
կեղծելու, անուանարկելու ժանտախտ
մը կը տարածուի հայ յեղափոխու-
թեան հրապարակին վրայ առհասարակ
եւ Հնչակեան կուսակցութեան մէջ,
ոմանց կողմանէ, վերջերս, մասնաւո-
րապէս : Ֆիզիքական ժանտախտն ա-
ւելի վտանգաւոր եւ աւելի սպառնա-
ցող է այս քաղաքական ախտաւորումը :
Մարդիկ կանարարականան, կազ-
մակերպութիւններ կանարարականա-
նան, ժողովուրդ մը ամբողջ անբա-
րոյականայու վտանգին մատնուած է :
այդ «պաշտօնական» սուտերու, զըր-
պարտութիւններու, կեղծարարութիւն-
ներու ախտաւոր ճերմութեն, ու, այս
մահացու համաճարակին դէմ հակա-
նեխիչ դարմանը պիտի ըլլայ միմի-
այն քիչ մը դատողութիւն :

Ամերիկայէն վերջերս զրկուած «պաշ-
տօնական յայտարարութեան» մը պաշ-
տօնական սուտերէն քանի մը հա-
տերը հերքած եմ ջախջախիչ կերպով :
Սա 20,000 տոլարի խնդրոյն վրայ
ալ նայինք՝ տեսնելու համար թէ,
որքան դիւրութեամբ հրապարակ կը
նետուին ծրի զրպարտութիւնները :

«Պաշտօնական ? յայտարարութիւնը»
կամքաստանէ Նահ. Վարչութիւնը,
Նահ. Ժողովը եւ կեդր. Վարչութիւնը
20,000 տոլար անձնական հաճոյքնե-
րու համար միտած ըլլալու մէջ :
Եւ կամքաստանէ միայն :

Այդ «պաշտօնական ? յայտարարու-
թիւնը» հանուած է, իբր թէ՞ Ամե-
րիկայի Հնչակեան Ընդհ. Պատգամա-
ւորական Ժողովը մը կողմանէ, եթէ
զոնէ ճշմարիտ է որ այդ Պատգամա-
ւորական Ժողովը օրինաւոր էր, ին-
չուն ուրեմն ինքզինքին իրաւունքը
տուած չէ Նահ. Վարչութեան գանձա-
պետը կանչելու որ հաշիւ ներկայա-
ցունէ : Ինչպէ՞ս որեւէ անհատ, որեւէ
մարմին կրնայ ինքզինքին թոյլ տալ
դրամական զեղծում վերագրելու մէ-
կին՝ առանց անոր հաշիւը առած ըլ-
լալու : Այդ կեղծ Պատգամաւորական

Ժողովը որ իրաւասութեան մը գի-
տակցութիւնը եւ համարձակութիւնը
ունեցած չէր Նահ. Վարչութեան գան-
ձապետը հաշիւի կանչելու, ինչպէս
կրնայ սպասել որ յեղափոխական
գործի յատկացուած դրամներու հա-
շիւը հրապարակաւ, յրազրութեան
մէջ տրուի : Յեղափոխական գործի
դէմ ատկէ աւելի մատնութիւն կա-
րելի՞ է երեւակայել :

Ինքզինքը Պատգ. Ժողովը կոչելու
յաւանդութիւնը ունեցող ժողովը՝ որ
ձեր ճանչցած աղտոտ Սապահ-Գիւլեանի
քանի մը ենթակայներէն անդին չանց-
նիր, եթէ Հնչակեան կուսակցու-
թիւնը վարկաբեկելու թուաւոր միա-
քը չունէր, ինչո՞ւ չի քննադատ,
չստուգուած ներքին խնդիրները հրա-
պարակ կը նետէ եւ միտքերը առ հա-
սարակ քայլթակեցուցնելու պատճառ
կը դառնայ : Չէ՞ որ կը մօտենայ մա-
մանակը Ընդհանուր Ժողովին, եթէ
այդ մարդիկը կուսակցութեան եւ յե-
ղափոխութեան պատուոյն յախանձա-
խնդիր էին, ինչո՞ւ համարութիւնը
չունեցան սպասելու կուսակցութեան
Ընդհ. Ժողովին՝ ուր պիտի քննուին
բոլոր խնդիրները եւ բոլոր հաշիւ-
ները : Ստացածին զեղծութիւնը հրա-
պարակելու այդ փութկոտութեանը մէջ
չէ՞ք տեսնել չարութիւնը, վարկա-
բեկելու, քանդելու ոգին, «Ոչ ինձի,
ոչ քեզի» մանկամիտ վարմունքը,
ասիական նենգամտութիւնը :

Ինչ որ Պատգամաւորական Ժողովը
կը կոչեն այդ աներեւոյթ մարդիկը,
իրենց իսկ խոստովանութեամբ, ըստ
իրենց «պաշտօնական յայտարարու-
թեան», այն «երեք, չորս պատգա-
մաւորներն» են, որոնք բողոքելով
գուրս եկեր են այն օրինակէն Պատ-
գամաւորական Ժողովէն որ Ամերի-
կայի 45 մասնաճիւղերու պատգամա-
ւորներով կազմուած էր քանի մը օ-
րեր առաջ :

Այսպէս որքան շփոթութիւններ
կան պիտի փարատին, որքան բար-
դութիւններ կան պիտի պարզուին,
որքան գայթակղութիւններ կան պի-
տի դարմանուին եթէ ամէն առթիւ
գործածենք քիչ մը դատողութիւն :

Շատերը տարբերութիւն չեն դնել

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(65)

ԹԻՍ. ՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԿՈՒՍԱԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

— Պարոններ . . . գիտցէ՛ք որ ձեր ընթացքը չար-
դարանար ոչ մէկ կերպով : Ես կը հաւատամ թէ ոչ
Հնչակեան կեդրոնը, ո՛չ ինչ Դրօշակեան պիւ-
սոն արգելք կրնան հանդիսանալ ձեր համաձայնու-
թեանը . . . Մտածեցէ՛ք . . . Ժողովուրդը ձեռքէ-
կերթայ : Բաւական է . . . Անմեղներու արեւնը
ձեր վրէժը թողուած է : Համաձայնեցէ՛ք որ Ներսէս
Արծրունին ալ իր Ուժով զայ միանայ ձեզի հետ :

— Չէ՞ որ Ներսէս Արծրունիի ուր ըլլալը չեմ
գիտեր ըսիք, ընդհանրաց Դրօշակեանը :

— Դուք սուէք ձեր ձեռքն իրարու . . . անկից
ետքը Ներսէս Արծրունին ալ կը գտնէք, չեղանք մեր
հսկայ աւազակապետը :

Կուսակցութեանց երկու ներկայացուցիչներն,
որոնք զաղտնի կերպով իրարու գործունէութիւնը
քննադատելու կաշխատէին, մեքենայաբար ոտքի ելան ու
ձեռք ձեռքի տուին եղբայրական գործվանքով մը :

— Ահա՛ այդպէս . . . բացառանքնք ներսէս Արծ-
րունին : Ուրեմն պարոններ, կը յայտնեմ ձեզ թէ՛
«Ներսէս Արծրունին ես եմ . . .» :

Երիտասարդները պատկառանքով մը անոր գրկաց
մէջ նետուեցան եւ ուխտեցին «համաձայնութեամբ
գործել . . .» :

ՎԱՆԱԿԱՆ ԻՐ ՍԻՆՏԻՆ ՏԱԿ . . .

Վարդապետ վանքին ցածուկ ու կէս մը փլիկած
խուցերէն մէկուն մէջ երիտասարդ վարդապետ մը
նստած էր ու խորունկ մտախոհութեան մը ներքեւ
կը թուէր ըլլալ :

Գիշեր էր : Ննամալ երկնակամարին վրայ լուսինը
կը չղար մեղամաղձօքէն ու իր ոսկի ճառագայթները
կը թափէր չորսդին : Մտերու մէջէն սիւզը կանց-
նէր ներդաշնակութեամբ մը :

Վարդապետին խուցը ճրագ չէր վառեր : Պատու-
հանին առջեւը նստած էր ան ու գուրս կը նայէր :
Բայց լուսնի փաղփուռ չղը, որ լուսաւորած էր
իր հրեշտակային կերպարանքը, իր լայն ու վեհ
ճակատը, ցոյց կուտար թէ երիտասարդ վարդապետը
մեր ծանօթ Վանականն էր :

Վանական Ժամերով մտածելէ ետքը, մեքենայաբար
ոտքի ելաւ, խուցին մէջ անգամ մը ման եկաւ,
յետոյ մըմնջեց ինքնիւրն :

— Ախ, արդեօք ո՞ր միայն Ներսէս Արծրունին . . .
ինչո՞ւ այսքան ուշացաւ . . . Ինչո՞ւ պատահեցաւ : Եր-
կու ամիս է որ միկնած է . . . : Այսօր անպատճառ

կը յուսայի որ կուգար ինձի : Բայց փուռ տեղ աչ-
քս իր ճամբան մնաց . . . փուռ տեղ սպասեցի :
Կասկածը կուտէ զիս . . . կը վախճամ թէ չկրցաւ
նպատակին հասնիլ, չկրցաւ խեղճ Լուսնայի կեանքը
սպանովել . . . :

Ու ցաւատանջ եղանակով մը, Վանական նորէն
մօտեցաւ պատուհանին, ուսկից կերեւար Վանքին
ծառաստանը չըջապատող թաւառներուն մէկ մասը,
գրեթէ յուզմունքէն ու մտախոհութենէ խոնջած
զուլըր գողգոջուն ձեռքերուն մէջ առաւ, որ տաք
քրտինք մը կը թափէր, երկար ատեն լուսնին նա-
յեցաւ, աստղերուն նայեցաւ, երկնքի անհունու-
թեան նայեցաւ ու հառաչեց .

— Ինչ ընենք . . . տունեմնիս քանդողը մեր ներ-
քին թշնամին է . . . մեր արեւնէն, մեր միսէն, մեր
ոսկորէն կաղմուած եղբայրն է . . . : Կառավարու-
թիւնը քանի որ քայլ մը կանուէ իր բարբարոսական
ծրագիրներու մէջ, հայ դաւաճան մը կը գտնէ,
որուն անարգ ձեռքը պատրաստ է իր եղբոր արեան
մէջ թաթխելու : Չեմ գիտեր, չեմ գիտեր միթէ՞ այդ
վտանքը խցի տեղ սեւ օձ մը կը պահեն իրենց
կուրծքին տակ, միթէ՞ անոնց սիրտը թունաւոր
զանդուած մըն է, որմէ վարչութիւն մը կը թափի,
միթէ՞ մարդու կերպարանքով հրէշ մը կոչուելու
ստեղծուած են . . . : Ախ, այո՛, թուրք կառավա-
րութեան լրտեսը կը գտնան, որպէս զի իրենց
զգուշիկ ու սեւցած կաշին ծածկեն . . . : Բայց թէ՛
այն հացը, զոր իրենք կուտեն, իրենց եղբոր արեւ-
նով չաղախուած է, այն ֆուրը՝ զոր իրենց չըր-
թունքները թրջելու կը ստանին, արցունքով խոտ-
նուած է . . . ատրկա աչքի առջեւ չեն բերեր : Ո՛չ

ՀԱՎԱՏՈՒՄԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Բայրիկէ Գորեմսքոնտեմին պե-
յանընա պինաէն, բուս տեօվէթի
Պուկարիայա եէնի պիր նօթա
եօլլայուպ, Մաքէթոնիաւտա իս-
լահաթըն օճրասընա գօմիթէլէրին
հարէքեաթը լանի օլտըղընը պե-
յանէն, էկէր Պուկարիա քէնտի
ալէնէն իթտիկի վատարը խիւ-
ֆընա օլարագ, Պալգանտա գա-
րըշըղըղա գուվէթ վէրէճէք օ-
լուր իսէ, մէսուլիյէթ ալթընտա
գալահաղընը իթմար իթմիշ:

— Արնավուտար Մարտ 30տա
Միթրօվիցա շէհրին իւզէրինէ
հիւճուս իթմիշէր: Օրատա պու-
լընան օսմանը ասքէրի անէր իւէ
իքի սաաթ մուհարէպէտէն սօնրա
Արնավուտարը կէրի շէքիւմէյէ
մէճպուր իթմիշ: Արնավուտար-
տան խայլը թէլէֆաթ օլմուշ:
Այտըն վիլայէթինտէն պիր ալա
եէնի ասքէր կէօնտէրիւմիշ:

Բուս էլիսի Մ. Ջինովիէպ պու-
իթիլալտան տօլայը Պապը Ալիէ
միւրահաթմա պուլընմըշ տըր:

— Պէկրատտա նէշը օլընան
Սրանքա նամ կաղէթանըն Ալպա-
նիատան ալտըղը մալիւմաթ իւզէ,
Արնավուտար եէնիտէն Միթրօ-
վիցա իւզէրինէ հիւճուս հաղը-
լանըլար ըմըշ:

— Իթալիա էլիսի Սատրաղամա
միւրահաթմա, պիւա թէէթիւր իս-
լահաթըն իճրասընը վէ Մաքէ-
թոնիատա իթիլալը թէսքին ի-
չիւն թէտապիրի լաղըմէ իթթի-
խաղ օլընմարըն վէ իսլամ Ար-
նավուտարըն վէ բէտիֆ ասքէրիւ-
րին հարէքեաթըն մէնն իտիւ-
մէսինի թալէպ էլլէմիշ օլտըղը
Բօմանտան պա թէլէկրաֆ պիւտի-
րիւմիշ տիր:

— Սօֆիատան Մարտ 31 թա-
րիլի թէլէկրաֆա նաղարէն, է-
տիրնէ վիլայէթի տախիլինտէ
Մուսթաֆա-Բաշատաքի չըմէն-
տըֆէր քէօրիւսի տինամիթլէ
խարապ օլընմըշ: Պու իշի պու-
կար գօմիթալարըն համ իտէ-
յօլլար:

— Մըսըրտա եէնիտէն եուսու-
հագ իլլէթի պաշ կէօսթէրմիշ օլ-
մաղլէ, Սթանպուլ սըհհիյէ գօմի-
սիօնը Աղէքսանտրիատան թիւրք
սահիլլէրինէ եանաշան վաքօրլարա
4 կիւն գարանթինա թախսիս իթ-
միշ տիր:

— Արնավուտարըն Միթրօվի-
ցայա հիւճուս սէպէպի իւէ, Պա-
պը Ալի տէր հալ Սէլանիքտէն
ժանտարմա վէ ասքէրիւր կէօնտէր-
տի: Քէզա Այտընտան էվվէ կէօն-
տէրիլէն սէքիւր թապուրտան մաս-
տա, եէնիտէն 16 թապուր եօլա-
չըգմըշ օլտըղը Սթանպուտան
Մարտ 31 թարիլի պիր թէլէ-
կրաֆ պիւտիւրմիշ տիր:

— Թաւըն վիէննա մուկպիրի

պուկար գօմիթէլէրինէ տէհէթլի
նիյէթլէր համ իտէյօր: Կէօնա,
մուկպիրէ վէրիլէն մալիւմաթ իւզ-
րէ, Պօրիս Սարաֆօվ վէ բէֆէ-
գասը հէր շէյի 'էօզէ ալարագ,
ուսուս ըսեան իւնն իտէճէքլէր ի-
միշ, պու ըսեանըն իւք իշարէթի
գըրկընլէ պաշլայահագ, իսլամ-
լարտան մաստա խրիսթիանլարը
տախի, բուս, սըրպ, քուցօ վա-
լագ, գըրահագլար ըմըշ, բէզա էվ-
րօքալարը վէ գնաօլտարը Սթան-
պուտա տախի պէօյիւք պիր սէ-
ֆարէթհանէ — Բուսիտըն — վէ
Պանգ-Օթօմանը հալայա աթա-
հագլար ըմըշ: Պու իթիլալ թա-
պի թիւրք հիւքիւմէթինին շէ-
տիտ թէտապիրիլէր էլէ ալմասընա
սէպէպ օլահագ, վէ պուսուս իւ-
զէրինէ էվրօքա տէօվէթլէրի, էն
էվվէլ: Բուսիա, Մաքէթոնիայը
մուգաթլէտէն գուրթարմագ ի-
չիւն սիւհահա տապրանահագ վէ անը
օսմանըլարտան խէլաս իտէճէք
տիր: Իշթէ գօմիթէլէրին բլանը
շու միւտհիշ վէ չօճուգա թա-
սապիւրաթտան իպաիէթ օլտը-
ղընը մուկպիր կէօսթէրիյօր:

— Ֆրանկֆօրթի Յայրառնկա
Մարտ 30 թարիլի Սթանպու-
տան պիւտիլիւմիշ տիր: «Բուս
էլիսի Մ. Ջինովիէպ էվվէթի
կիւն Սուլթանըն հուզուրընա չըգ-
մասընտա՝ Մաքէթոնիայը շէթէ-
լէրին հարէքեաթը վէ Արնավուտ-
լարըն մուկալիֆաթը արթմագտա
օլտըղը հալտէ, Սուլթանըն տահա
շէտիտ վէ տահա մուէսսիր թէտ-
պիրիլէր էլէ ալմասընը թապսիէ
իթմիշ»:

— Երուսաղէմտէ Մարտ 30տա,
կիճէ, շէտիտ պիր զէրգէլէ վու-
գու պուլմուշ իսէտէ, խասարաթը
էհէմմիյէթսիւր օլմուշ տըր:

— Քօսովա վիլայէթինտէ իս-
թէպէ եագըն պիր միւստէմէ
վուգու պուլուպ, 28 պուկար էօլ-
միւշ վէ էրզագ նագլ իտէն 30
պէյկիր գապթ օլընմըշ օլտըղը
թիւրք մէնպասընտան Թաւնա պի-
տիրիլիւմիշ տիր:

— Ֆրանսէ նամ կաղէթատան
ալուպ, Լ'Առնէնի շու մաթէմագ
հալատիսի վէրիյօր: «Էրզրում
վիլայէթի տախիլինտէ հարտիֆ
նամ էրմէնի բէօյի քիւրտլէր սօյ-
տուլար: Էհալիտէն պիր չօզլարը-
նը գաթլ իթտիլէր վէ 4 գըզ գա-
չըրտըլար»:

ՊԱԼԳԱՆ ՏԵՕՎԷԹԼԵՐԻՆ

ԳՈՒՎԷԻ ԱՍԻԷՐԻԹԵՍԻ

Մաքէթոնիա մէսէլէսին ուսու-
մըն տըգգաթընը ճէլպ իթտիկի
շու սըրտա Պալգան տէօվէթլէ-
րինին գուվէթի ասքէրիւսինի պիր
ալման կաղէթասը սուրէթի աթի-
էտէ կէօսթէրիյօր:

Գարաաղ: — Պուրտա 16 եա-
չընտան 60 եաչընա պատար աս-
քէր սալըլըլար: Գարաաղըն
տախի օրտուսը եօգ տըր, ֆա-

գաթ բազար վէ եօրթու կիւնլէրի
հէրքէն թալիմէ կիտէր: Պիր աս-
քէրիէ մէքթէպի վարտըր, գա-
պիթլէրի իթալիտա իլիմ թահ-
սիլ իտէրլէր: շիմտի 9060 մէք-
թէպիսի վար տըր: Մուհարէպէ
էսնասընտա 38,000 ասքէր չըգա-
րըր, պուկարտան 2500 իսլամ
տըր:

Երուսաղէմտէ Երուսաղէմ օրտուսը-
նըն ուկուսըղըլը մէտանա չըգ-
տը: վէ շիմտիյէ գատար օրտու-
նըն թանգիմի իչիւն ճիտտի պիր
ատըմ ալընամատը: Սուլէ էսնա-
սընտա 25,000 ասքէրի պուլընա-
հագ իսէտէ սիւհահ ալթընտա օ-
լանլար 9,000տէն զիյատէ տէկիլ
տիր: 60,000 Մանիհէր թիւֆէնկի
սըրարըշ օլընմըշ, ֆագաթ ալըն-
մամըշ տըր: Ջապիթլէրի իթիլար
տըրլար: Բիտտէ եիւզ պաշըլարըն
իւշ բայընտան իթիսի 50-60 եա-
չընտա տըր: քէզա սիւվարիլէր:
Երուսաղէմ գապիթլէրի տախիլ բար-
թի գապիլարընա գարըշըլար:

Մուհարէպէ էսնասընտա 160,000
ասքէրի օլահագ: Ֆագաթ պու-
հիտտի տէկիլտիր: 1897տէ իքի
այ գարֆընտա անահագ 80,000 քի-
շի չըգարապիլտիր, պուսըն տախի
եալընըղ 50,000 ի մուհալէպէ մէյ-
տանընտա կէօիւնտիր:

Սերպիա — Սուլէ էսնասըն-
տա, բեաղըտ իւզէրինտէ, 1180
գապիթի վէ 21000 ասքէրի վար
տըր: Ֆագաթ հիւ պիր վագըթ
թէմամ պուլընմամըշ տըր:

Էսնահ մուհարէպէտէ Սերպիա-
նըն 250,000 ասքէրի օլապիլէճէ-
կինի բուս միւրալայը Լէօնթէվիշ
կէօսթէրմիշ իսէտէ, պու մասալ
հիւքմիւնտէ տիր, Մուհարէպէտէ
պէօյիւք զայրէթլէ էկէր Սերպիա
100,000 ասքէր չըգարահագ օլուր
իսէ «աֆէրէն» էլայըգ օլուր:

Պուկարիա — Պու պէյիկին
մալիլէճէ սըզընթըս սէպէպի իւէ
շիմտի 18,500տէն 20,000 ասքէր
հաղըր թուլմագտա տըր: Ֆա-
գաթ սուլէ էսնասընտա 40,000
ասքէրի օլմասը լաղըմ իսէտէ
35,000տէն զիյատէ օլմալըշ տըր:
Մուհարէպէ էսնասընտա 200,000
ասքէր չըգարահագ, ֆագաթ ճիտ-
տի օլարագ 125,000 զօր չըգա-
րըր տէյօրլար:

Պուկարիանըն թօրճըլարը վէ
ճէպհանէսի միւքէմմէլ սըրտա
պուլընմագտա տըրլար: Պու սէնէ
պէօյիւք մանէվրա իճրա օլընմատը
բարա պուլընմատըղընտան: Սօն
սէնէլէրտէ գապիթլէրին իւլի վէ
թալիմի իչիւն չօգ զայրէթ իպ-
րաղ օլընտը: Նիհայէթ Պուկա-
րիա էհէմմիյէթլի պիր գուվէթլէ
մալիք տիր: Տէնիլտէն Բուսիա ի-
լէ միւնասիպէթի օլտըղը, իգթի-
զաի հալ հարպէլէ վագիլմաթը իչիւն
քէնտիսիէն պէօիւք գօլալլէգ վէ-
րիր:

Բուսիա — Սուլէ էսնասըն-

տա 3474 գապիթի վէ 116,000
ասքէրի վար տըր, պուկարտան
40,000 ի տախի գալըր, վէ 70000
գուրա իլէ սիւհահ ալթընա ալընըր:
Մուհարէպէ էսնասընտա 3948
գապիթ վէ 168000 յէֆէր չըգա-
րըր: վէ 50000 քիշի մուհաֆըզ
(ժիլիցիա) հիսապ օլընըր: Հէր
սէնէ մանէվրա իճրա օլընըր գրա-
լըն վէ վէլի: հտըն հուզըրընտա:
գապիթլէրի իլիմէ աչնա տըրլար:

ՏՕԳԹ. Ն. Կ. ԹԱԿԻՈՐԵԱՆ

Նախկին բժիշկ Ս. Փ. Ազգ. հիւ-
ւանդանոցին Կ. Պօլսոյ, Նախկին
բժիշկ Պուկարիոյ կառավարական
հիւանդանոցներու եւ նահանգաց:
Մասնագէտ կանանց, տղոց ներ-
քին եւ գաղտնի հիւանդութեանց:
Այս Պուկարիայոյ բժիշկը երկար
տարիներէ ի վեր իւր արհեստին մէջ
փորձառութիւն եւ հմտութիւն ստա-
ցած՝ եւ երկու տարի առաջ ալ վիէն-
նայի համալսարանի հիւանդանոցնե-
րուն մէջ աշխատած լինելով, այժմ
հաստատուած է Սօֆիայի մէջ, Պու-
լըվար Տօնտուքօֆ, թիւ 16:

Հիւանդ կընդունի ամէն օր ժամը
9—12 եւ 2—4 (Ը. Ե.) չորեքշաբթի
օրերը ձրի կը դարմանէ իւր բնակա-
րանին մէջ:

2—1

ԱՐԴՈՒԿԱԳՈՐԾ

Ա. քաղ փողոց Պալըգ-Բաղար թիւ 467
Բաղաքս նոր հաստատուած Մուրատ
թիւնգարեան եւ Սեդրակ Կուստուգեան
արդուկագործ ընկերները կը ծանու-
ցանեն յարգոյ հասարակութեան թէ
մեծ խնամքով կարող են ու կոստան
(գօլա) ամէն կարգի ճերմակեղէններ:
Դիւնըր խիստ չափաւոր են:

2—1

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

Թիւսպարսի Ա. հաստորը զրկած ենք
մեր հետեւեալ գործակալներուն:
ուստի այդ խիստ հեռաքրքրաշարժ ու
չանկան գիրքը ստանալ փափաքող-
ները կրնան գիտնել:

- Պուրկազ Տ. Արտաշէս Հարինցի
- Ֆիլիպի » Գ. Թիւթիւնեանի
- Շուրլա » Ասլան Տօնիկեանի
- Ռուսոյ » Սարգիս Մանուկեանի
- » Է. Գափրիէլեանի
- Սօֆիա » Ասատուր Մկրտիչեանի
- Տօպրիշ » Նիկողոս Միսակեանի
- Սիլիւստ » Թ. Սարգիսեանի
- Սիլիւստ » Տէր Վաղինակ Հօր
- Պուգրեշ » Թովհ. Փափազեանի
- » » Թովհ. Պափազեանի
- Քօնստանդ » Միսակ Մելիքեանի
- Կալաց » Տէր Դեւոնդ Հօր
- » » Գրիգոր Թափազեանի
- Դուհիւր » Կ. Էրզնկապեանի
- Աղեթսան » Ս. Մարպանեանի
- Պուրն » 2. Հայրենեացի խմբ.
- Ֆիլիպս » Կ. Մարութեանի
- Ռուս » Թակոր Ֆրանքեանի

176 Սաւուր Պրիճ



ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Եթէ կուզէք հագնել կօշիկներ ու-
րոնք իրենց վրայ միացունեն ձեւի եւ
գիմազկունութեան կատարելութիւն
եւ մանաւանդ զինի չափաւորութիւն,
առանց վարանելու դիմեցէք Ս. Ռօ-
րատանեանի: Մուսալա, Տօքթ.
Պատանօվիչի տանը գիմազ:

Одговорились Н. Драгулево
Печатница Взаимность Варна.